ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 136- Ա /1 **19 հուլիսի 2017 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2017 թվականի հունվարի 13-ի 1-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2017 թվականի հիմնական միջոցառումների պլանի 1.5.1 կետի պահանջները.

որոշում եմ՝

1. 2017 թվականի հուլիսի 26-ից 28-ը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի ղեկավարությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում անցկացնել հատուկ տակտիկական ուսումնավարժություն «ՀՀ Գեղարքունիքի մարզի տարահանման մարմինների ծավալում (տարահանման/ընդունման/ հավաքակայաններ, ժամանակավոր տեղակայման և երկարատև բնակության կետեր) և բնակչության պատսպարման կազմակերպում» թեմայով՝ գործնականում իրականացնելով ազդարարման, պատսպարման և տարահանման միջոցառումներ:

2. Հաստատել հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն հավելվածի:

3. Նշված ուսումնավարժությանը պատշաճ նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով ստեղծել ուսումնավարժության ղեկավարման խումբ՝ հետևյալ կազմով.

Հակոբյան Կարեն - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, ուսումնավարժության ղեկավարի տեղակալ

Գալստյան Էդիկ - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարկարչության պետ փրկարական ծառայության գնդապետ, ուսումնավարժության ղեկավարի օգնական

Շահսուվարյան Կոլիկ - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սոթք համայնքի ղեկավար, ուսումնավարժության ղեկավարի օգնական

4. ՈՒսումնավարժությանը ներգրավել՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմին, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությանը, մարզային տարահանման հանձնաժողովին և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սոթք համայնքի ՔՊ ղեկավար կազմին ու տարահանման հանձնաժողովին:

5. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալ, ՀայաստանիՀանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին՝

1) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց, ներգրավված ուժերի նախապատրաստումը համաձայն հաստատված օրացուցային պլանի,

2) մինչև 2017 թվականի հուլիսի 27-ը զեկուցել ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին:

6. ՈՒսումնավարժության ղեկավարի օգնական,Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ փրկարարական ծառայության գնդապետ Էդիկ Գալստյանին՝

1) ապահովել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2017 թվականի հուլիսի 20-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հաստատմանը,

2) ապահովել համագործակցությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սոթքի համայնքապետարանի հետ ուսումնավարժության անցկացման հարցերում (ազդարարում, պատսպարում և տարահանում):

7. ՈՒսումնավարժության ղեկավարի օգնական, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սոթք համայնքի ղեկավար Կոլիկ Շահսուվարյանին՝

1) ուսումնավարժության ընթացքում ապահովել համայնքապետարանի ղեկավար կազմի պատսպարման գործընթացը,

2) ուսումնավարժության ընթացքում կազմակերպել տարահանման հավաքակայանի աշխատանքները.

3) ուսումնավարժության ընթացքում կազմակերպել բնակչության պատսպարման միջոցառումներ:

8. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) ուսումնասիրել գործնական միջոցառումներին առնչվող իրավական ակտերը և ուսումնավարժության անցկացման փաստաթղթերը,

2) ճշգրտել համատասխան պլանները և համալրել անձնակազմը համապատասխան գույքով,

3) զեկուցել ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017թ հուլիսի 19 -ի
N 136-Ա/1 որոշման

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողներ	Նշխատարման մասին
1	2	3	4	5
Փաստաթղթերի մշակում				
1	Ելակետային տվյալների որոշում՝ թեմա, անցկացման ժամկետ, վայր, մասնակիցների կազմ, մտահղացում, անցկացման Կարգ:	Մինչև 19.07.2017թ.	Ուսումնավարժության ղեկավար, ղեկավարի տեղակալ	
2	Օրացուցային պլանի մշակում և հաստատման ներկայացում	Մինչև 20.07.2017թ.	Ուսումնավարժության ղեկավարի օգնական	
3	ՀՏՈՒ անցկացման պլանի մշակում և հաստատման ներկայացում	Մինչև 20.07.2017թ.	Ուսումնավարժության ղեկավարի օգնական	
Ղեկավար կազմի նախապատրաստում				
4	ՀՏՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի ուսումնասիրում	Մինչև 21.07.2017թ.	Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ	
5	«ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, ՀՀ վրա գինված հարձակման,դրա անմիջական վտանգի առկայության, կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման ու ՏԻՄ, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառ. 2017թ. ապրիլի 6-ի 346, «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառ. 2000թ սեպտեմբերի 28-ի 592 և «Վտանգավոր	Մինչև 22.07.2017թ.	Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ	

	տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառ. 2011թ. օգոստոսի 18-ի 1180-Ն որոշումների ուսումնասիրում			
Ուսուցանվողների նախապատրաստումը				
6	ՀՏՈՒ մասնակիցների ազդարարման ցուցակների և սխեմաների ճշգրտում	Մինչև 20.07.2017թ.	Ուսումնավարժության ղեկավարի օգնականներ	
7	ՀՏՈՒ- կազմակերպման և անցկացման փաստաթղթերի հետ ծանոթացում	Մինչև 24.07.2017թ.	Ուսումնավարժության ղեկավարի օգնականներ	
8	Տարահանման հավաքակայանում գործածվող փաստաթղթերի մշակում և վարման հետ ծանոթացում	Մինչև 24.07.2017թ.	Ուսումնավարժության ղեկավարի օգնականներ	
9	Գործնական միջոցառումների իրականացման ուղղությամբ հրահանգավորում	Մինչև 26.07.2017թ.	Ուսումնավարժության ղեկավարի օգնականներ	
Ուսումնավարժության գործնական տեղամասերի նախապատրաստում				
10	Ուսումնավարժության վայրի տեղազննում	Մինչև 27.07.2017թ.	Ուսումնավարժության ղեկավարի օգնականներ	
11	Տեղամասերի նախապատրաստում	Մինչև 27 07.2017թ	Ուսումնավարժության ղեկավարի օգնականներ	
12	Տեղամասերում կապի միջոցների ծավալում	Մինչև 27.07.2017թ.	Ուսումնավարժության ղեկավարի օգնականներ	

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ